

ԼՈՒՌԻ ԳԻՇԵՐ

Լուռ է այս գիշեր... լուռ է իմ հոգին,
Չկան ո'չ աստղեր ու ո'չ ալ լուսին,
Կան միայն լոյսեր ճամբեքի վրայ
Եւ մութ ծառերու անուշ մեղեդին...:

Լուռ է այս գիշեր... լուռ է իմ հոգին,
Ու լռութեան մէջ անվերջ կը խորհիմ,
Վշտալի, խռով օրերու վրայ՝
Որոնք հիմա ես կու տամ անդունդին:

Լուռ է այս գիշեր... լուռ է իմ հոգին,
Եւ աչքիս առջեւ հիմա կը պարզուին
Կարօտներ անմաշ, յիշատակ աղուոր,
Որոնց տաք սրբտով հիմա կ'ընդունիմ:

Լուռ է այս գիշեր... լուռ է իմ հոգին,
Խաղաղութեան մէջ աղուորցած հոգիս
Երկընքին կու տամ, աստղերու փոխան
Թող ողջ այս գիշեր իշխէ աշխարհին...:

Լուռ է այս գիշեր... լուռ է իմ հոգին,
Երնէկ կըրնայի ես ամեն գիշեր
Այսպէս լռութեամբ երգեր յօրինել
Անխօս գիշերին, իմ լուռ հոգիին...: